# ԻՆՖԻՆԻՏԻՎԻ ՀԱՍԿԱՑԱԿԱՆ ԵՎ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԳԱԳԻՆՅԱՆ Ա. Ռ.

*Հասկացական կարգերը ընդհանուր բնույթի իմաստային տարրեր են, որոնք հատուկ են ոչ թե առանձին բառերի և բառաձևերի, այլ բառախմբերի, որոնք բնական լեզվում արտահայտվում են տարբեր միջոցներով:*

*Հասկացական կարգերի մեծամասնությունը բնորոշվում է միջուկից և ծայրամասից բաղկացած որոշակի գործառահիմաստաբանական դաշտով, որի քերականացված միջուկի դերում հանդես է գալիս համապատասխան քերականական կարգը, ինչպես, օրինակ՝ ժամանակայնությանը համապատասխանում է քերականական ժամանակը, եղանակայնությանը՝ եղանակը և այլն:*

*Հասկացական կարգի ուսումնասիրությամբ զբաղվել են Լ. Ելմսլևը և Օ. Եսպերսենը, խորհրդային լեզվաբանության մեջ՝ Ի. Մեշչանինովը, Ս. Կացնելսոնը, Վ. Յարցևան, Մ. Գուխմանը: Եթե Ելմսլևի և Եսպերսենի աշխատություններում այն զարգանում է տրամաբանական և լեզվական կարգերի հարաբերակցության պլանում, ապա արդեն Ի. Մեշչանինովը ընդգծում է հասկացական կարգերի բուն լեզվական բնույթը: Նա հասկացական կարգը հակադրում է, մի կողմից, քերականական հասկացությանը, մյուս կողմից՝ քերականական կարգին: Ընդ որում՝ հասկացական է համարվում այն կարգը, որը հանդես գալով տվյալ լեզվում՝ արտահայտվում է բառային, ձևաբանական և շարահյուսական որոշակի միջոցներով[1]:*

*Ավելի կարևոր է հասկացական կարգի՝ որպես լեզվական իմաստների ընդհանրացված մակարդակի և քերականական կարգի՝ որպես կոնկրետ լեզվի կառուցվածքային միավորի մակարդակի հակադրությունը: Այս հակադրության մեջ վերացականը, համընդհանուրը հակադրվում են կոնկրետին, համապատասխան լեզվի քերականական կարգում՝ նյութականացվածին[2]:*

*Ինչ վերաբերում է քերականական հասկացությանը, ապա Ի. Մեշչանինովի եռանդամ հակադրության մեջ ամենաանորոշը սա է: Այն միջին օղակ է կազմում վերոհիշյալ երկու կարգերի միջև: Հեղինակի բնորոշմամբ՝ սրանք այն հասկացական կարգերն են, որոնք լեզվում ստանում են իրենց ձևաբանական և շարահյուսական ձևը և, այսպիսով, կոչվում են քերականական հասկացություններ՝ ի տարբերություն բառային ձևավորում ստացած հասկացական կարգերի[3]:*

---

[1] **Гухман М. М.** *Понятийные категории, языковые универсалии и типология [Вопросы языкознания (այսուհետև՝ ВЯ), 1985, N 3, с. 7].*

[2] *Նույն տեղում, էջ 7-8:*

[3] *Նույն տեղում, էջ 8:*

Բոլոր լեզուների համար Ի. Մեշչանինովը տարբերակում է հետևյալ հասկացական կարգերը՝ առարկայությունն ու ստորոգայությունը, ենթական և խնդիրը, որոնք ապահովում են սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունը, որոշչայնությունը, եղանակայնությունը, ինչպես նաև որակը և քանակը[4]: Ավելի ուշ հասկացական կարգերի ընդգրկումը փոքր-ինչ մեծանում է:

Հասկացական կարգերի քննությունը սերտորեն կապված է տիպաբանության, հատկապես բովանդակային (կոնտենսիվ) տիպաբանության, դրա մեջ ներմուծված մակերեսային և խորքային կառույցների տեսությունների հետ, որոնց շնորհիվ խորքային մակարդակում արդեն անհետանում են տիպաբանական տարբերությունները, քանի որ նրանց հիմքում ընկած է բովանդակային լեզվական ընդհանրությունը[5]:

Հասկացական կարգերը լեզվի համար կարևոր մտային (մենթալ) կարգեր են՝ կապված մի կողմից տրամաբանական-հոգեբանական, մյուս կողմից՝ լեզվի իմաստաբանական կարգերի հետ: Դրանք ծագումնաբանական տեսանկյունից կարծես թե նախորդում են լեզվական կարգերին:

Անշուշտ, պետք է նկատի ունենալ, որ «հասկացական կարգ» եզրը միանշանակ չի ընդունվում[6]: Ըստ Ա. Բոնդարկոյի՝ «հասկացական կարգ» եզրն այնքան էլ հաջողված չէ, քանի որ մատնանշում է միայն մտածողության ոլորտը, այդ իսկ պատճառով նա գերադասում է լեզվաբանության մեջ ներմուծել նոր տերմին՝ գործառահիմաստաբանական կարգ կամ գործառահիմաստաբանական դաշտ[7]:

Գործառահիմաստաբանական դաշտերը ներառում են կոնկրետ լեզվի իմաստաբանական և արտահայտության պլանի որոշակի տարրեր: Այստեղից էլ այդ դաշտերի մեկնաբանությունը՝ որպես մակերեսային մակարդակի միավորներ: Գործառահիմաստաբանական տվյալ դաշտի իմաստային գործառույթը որոշակի խորքային անփոփոխակային հասկացական կարգի մակերեսային իրացումն է: Հասկացական կարգերը, ունենալով ընդհանրական բնույթ, վերաբերում են խորքային մակարդակին, մինչդեռ տվյալ հասկացական կարգի լեզվական իմաստային կոնկրետ մեկնաբանությունը և դրա արտահայտման միջոցների ամբողջությունը՝ մակերեսային մակարդակին[8]:

Ա. Բոնդարկոն տարբերակում է հաստատուն (ֆունդամենտալ) հասկացական կարգեր, որոնք պարտադիր ու համընդհանուր են, և ոչ

---

[4] Նույն տեղում, էջ 7:

[5] Նույն տեղում, էջ 11:

[6] **Шустова С. В.** *Типы и функции понятийных категорий, Pazhuhesh-e Zabanha-ye Khareji. N 47, Special Issue, Russian, Winter, 2009, p. 63.*

[7] **Бондарко А. В.** *К проблематике функционально- семантических категирий (Глагольныи вид и "аспектуальность" в русском языке) (ВЯ, 1967, N 2, с. 18).*

[8] **Шустова С. В.,** նշվ. աշխ., էջ 61: **Бондарко А. В.** *О некоторых аспектах функционального анализа грамматических явлений (Функциональный анализ грамматических категорий, Л., 1973, с. 12).*

*հաստատուն (ոչ ֆունդամենտալ) կարգեր՝ ֆակուլտատիվ կամ ոչ համընդհանուր, այսինքն՝ վերաբերում են կոնկրետ լեզուների[9]:*

*Ներկայումս գոյություն ունի հասկացական կարգերի դասակարգման երկու մոտեցում՝ համակարգային և կառուցվածքային: Համակարգային մոտեցման դեպքում հասկացական կարգերը ուսումնասիրվում են հարացուցային հարաբերությունների տեսանկյունից, այլ կերպ՝ հասկացական դաշտերի և իմաստային հակադրությունների կազմության մեջ խաղացած՝ դրանց դերի տեսանկյունից:*

*Այսպես՝ հասկացական կարգերը կարելի է բաժանել երկու խմբի՝ դասակարգող և վերափոխող: Եթե դասակարգող հասկացական կարգերի դեպքում հատկանիշը հակադրության կազմում խաղում է միավորող դեր, և այդ միավորի իմաստը ամրագրված է (խոսքի մասեր, բառաքերականական շարքեր), ապա ձևափոխողի դեպքում հատկանիշը հակադրության կազմում խաղում է տարբերակիչ դեր (բառափոխական կարգեր): Մյուս կողմից՝ հասկացական կարգերի դասակարգումն ի հայտ է բերում դրանց հարաբերությունը իրենց հետ լծորդության մեջ գտնվող քերականական կարգերի հետ, որը գուգահեռ է Ա. Բոնդարկոյի գործառահիմաստաբանական դաշտերին: Ընդ որում՝ բայի քերականական կարգերին համապատասխանում է ստորոգայնության հասկացական կարգը, գոյականի քերականական կարգերին՝ առարկայնության հասկացական կարգը, ածականի քերականական կարգերին՝ որոշչայնության հասկացական կարգը և այլն: Ստորոգայնության հասկացական կարգերը բաժանվում են կերպաժամանակային, եղանակաէական և ակցիոնալ-ակտանտային խմբերի: Կերպաժամանակայինն իր հերթին բաժանվում է կերպային, ժամանակային և տակսիսի (ժամանակային հաջորդականություն՝ համընթացություն, նախորդում և հաջորդում), եղանակաէականը՝ օբյեկտիվ եղանակայնության (իրական և ոչ իրական, հնարավորություն և անհրաժեշտություն), սուբյեկտիվ եղանակայնության (հրամայականություն, ըղձականություն և այլն) և էականի-գոյի: Ակցիոնալ-ակտանտային խումբը բաժանվում է ներգործականի և կայականի, անցողականության, անանցողականության, անդրադարձության: Առարկայնության հասկացական կարգերը բաժանվում են սեռայնության, շնչավորի ու անշունչի, ինչպես նաև անորոշի և որոշյալի, կոնկրետի և ոչ կոնկրետի և այլն:*

*Հասկացական կարգերի կառուցվածքային մոտեցման դեպքում դրանք դիտարկվում են շարահյուսական տեսանկյունից, այսինքն՝ տեքստի և ասույթի իմաստային կառուցվածքի ձևավորման մեջ դրանց կատարած դերի հաշվառումից և տեսանկյունից: Տարբերակում ենք կառուցվածքային մոտեցման երկու տեսակ՝ արտահիրադրական և գործաբանական:*

*Եթե հասկացական կարգի արտահիրադրական բովանդակությունը ներառում է իրադրությունը՝ իր առարկայական հարաբերություններով և ունի*

---

[9] **Бондарко А. В.** *Теория морфологических категорий, Л., 1976, с. 78.* **Шустова С. В.,** *նշվ. աշխ., էջ 62:*

*նախադրանքի (պրոպոզիցիա) կառուցվածք, այլ կերպ՝ նախադասության տրամաբանական կառուցվածք, ապա գործաբանական բովանդակությունը իրադրության հարաբերությունն է տվյալ խոսքային ակտին՝ իր բաղադրիչներով, հաղորդակցության անդամների, խոսքային ակտի ժամանակի և տեղի հետ: Այն ներառում է տեղեկատվության արտահայտչական (էքսպրեսիվ), կոչական (ապելատիվ), սոցիալական, ցուցական, անդրլեզվական (մետալեզվական) և գեղագիտական շերտերը*[10]*:*

*Հաշվի առնելով մեր աշխատանքի բնույթը՝ ինֆինիտիվի (անորոշ դերբայ) հասկացական կարգերը կառուցվածքային մոտեցմամբ կդիտարկենք արտահրադրական տեսանկյունից:*

*Եթե հարացուցային մակարդակում անորոշ դերբայը արտահայտում է առարկայի գործողություն՝ առանց առնչության տվյալ առարկայի հետ, քանի որ նրա դեմքը անորոշ է, ապա շարակարգային մակարդակում ձեռք է բերում այլ հասկացական և քերականական կարգեր, այդ թվում՝ նաև դիմայնության, որը դրսևորվում է քողարկված ենթակայով (օրինակ՝ տրական, հայցական հոլովների տեսքով)*[11]*:*

*Այսպիսով՝ անորոշ դերբայի հասկացական կարգերը հարացուցային մակարդակում ժամանակայնությունը, սեռայնությունը, կերպայնությունն ու տիպարայնությունն են: Ինչ վերաբերում է դրա քերականական կարգերին, ապա դրանք սերտորեն կապված լինելով համապատասխան հասկացական կարգերի հետ՝ իրենց արտացոլումն են գտնում կոնկրետ լեզուներում:*

*Գ. Ջահուկյանը, խոսելով հայերենի անորոշի մասին, նույնպես նշում է, որ անորոշ դերբայը պահպանում է բայի ոչ-ստորոգական կարգեր, ինչպես սեռը, կերպը և տիպարն են, երկրորդաբար նաև երկրորդական բաղադրյալ ձևերին համապատասխան ձևեր, որոնք տարբերակվում են ըստ ժամանակային հաջորդականության՝ գնացած լինել (նախորդում), գնալու լինել (հաջորդում), գնալիս լինել (համընթացություն, միաժամանակություն)*[12]*:*

*Ընդ որում, դրանք բոլորն էլ պատմական կարգեր են և զարգացել են ժամանակի ընթացքում, անորոշի բայական կողմի զարգացմանը զուգահեռ: Որպես կանոն, դրանք զարգացել են այդ հակադրության մեկ անդամից, այսինքն՝ մեկ հասկացույթից (քերականույթից), որն էլ իր հերթին սերտորեն կապված է դրա հիմքի հետ: Սովորաբար առրիստի (անցյալ կատարյալ) հիմքը ունի վիճակայնության, միջին սեռի իմաստ, իսկ ներկայի կամ անկատարի հիմքը՝ գործողայնության, ներգործական սեռի իմաստ:*

**Ժամանակայնությունը՝** *որպես անորոշ դերբայի հասկացական կարգ, ուշ է զարգացել և հատուկ է ոչ բոլոր լեզուներին: Այն դրսևորվում է այնպիսի*

---

[10] *Языкознание. Большой энциклопедический словарь, М., 1998, с.385.*

[11] *Հմմտ.* **Тупикова Н. А.** *Формирование категории инперсональности русского глагола, Волгоград, 1998, с. 63-64.*

[12] **Ջահուկյան Գ. Բ.,** *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 511-512:*

*կառույցների տեսքով, ինչպիսիք են հին հունարենին հատուկ ներկայի, աորիստի, պերֆեկտի (վաղակատար ներկա), ապառնիի ինֆինիտիվները: Թեև հարկ է նշել, որ հին հունարենի ինֆինիտիվի ներկան և աորիստը գոյականի գործառույթում ունեն կերպային և ոչ թե ժամանակային իմաստ, ներկա ինֆինիտիվը ռուսերենում թարգմանվում է տևական կերպի անորոշի ձևով, իսկ ինֆինիտիվի աորիստը՝ ոչ տևական կերպի անորոշի ձևով: Լատիներենում այս երկու ինֆինիտիվին համապատասխանում է ինֆինիտիվի ներկան: Ինֆինիտիվ պերֆեկտը պահպանում է սահմանական եղանակի պերֆեկտին հատուկ վիճակի իմաստը, այսպես՝ poieīn «անել (անկատ.)»,* poihσai *«անել (կատ.)», pepoihkénai «արված լինել»*[13]*: Կան նաև վաղակատար անցյալի ձևեր*[14]*: Լատիներենի ինֆինիտիվը օժտված է ներկա, պերֆեկտ և ապառնի ժամանակաձևերով՝ laudāre, laudavisse, laudatūrus esse*[15]*, գերմաներենը՝ երկու՝ ներկա և անցյալ՝* lesen, gelesen haben*: Ֆրանսերենում և անգլերենում ինֆինիտիվը նույնպես ունի ներկայի՝ travailler, partir, to translate, to go և անցյալի ձևերը՝ avoir travaillո, Utre parti, to have translated, to have gone:*

*Անցյալ ինֆինիտիվը սովորաբար ցույց է տալիս դիմավոր բային նախորդող գործողություն՝ am glad to have studied English. «Ես ուրախ եմ, որ ուսումնասիրել եմ անգլերեն»*[16]*, est content de vous avoir vu. «Ես ուրախ եմ ձեզ տեսնելու համար (որ ձեզ տեսա)»*[17]*:*

*Հարկ է նկատի ունենալ, որ անցյալի ինֆինիտիվը նշում է հարաբերական ժամանակ՝ ցույց տալով ինչպես նախորդում, այնպես էլ հաջորդում և միաժամանակություն*[18]*: Ընդ որում, հաջորդումը և միաժամանակությունը կախված են համատեքստից և, բնականաբար, վերաբերում են կառուցվածքային մոտեցմանը:*

*Ինչպես վերը նշվեց, Ջահուկյանը հայերենի համար նույնպես առանձնացնում է երկրորդական բաղադրյալ ձևերին համապատասխան ձևեր, որոնք տարբերակվում են ըստ ժամանակային հաջորդականության՝ գնացած լինել (նախորդում), գնալու լինել (հաջորդում), գնալիս լինել (համընթացություն, միաժամանակություն): Բնականաբար, անորոշը այս բոլոր դեպքերում կորցնում է ստորոգման հետ կապված կարգերը՝ դեմքը, իրաղրական ժամանակը, եղանակը, այլև դեմքի հետ կապված դասը և թիվը*[19]*:*

**Կերպայնությունը** *նույնպես ինֆինիտիվի ուշ զարգացած կարգերից է, որն առկա է օրինակ՝ հին հունարենում և ռուսերենում: Հին հունարենում այն*

---

[13] **Соболевский С. И.** *Древнегреческий язык, М., 1948, с. 329-330.*

[14] **Löwe G.** *Griechisches Lehrbuch, Berlin, 1972, S. 180-181.*

[15] **Покровская З. А., Кацман Н. Л.** *Латинский язык, М., 1987, с. 194-195.*

[16] **Gouzeeva K. A. Kostygina S. I.** *The Infinitive, St.-Petersburg, 2000, p. 29 -30.*

[17] **Костецкая Е. О., Кардашевский В. И.** *Практическая грамматика французского языка для неязыковых вузов, М., 1997, с 163.*

[18] **Schendels E. J.** *Deutsche Grammatik, Moskau, 1979, S. 100.*

[19] **Ջահուկյան Գ. Բ.,** *նշվ. աշխ., էջ 511-512:*

արտահայտվում է, ինչպես վերը նշվեց, ներկայի և առրիստի հակադրման միջոցով: Եթե կերպը դիտենք որպես սահմանայնության և ոչ սահմանայնության հակադրությամբ օժտված ձև, ապա ռուսերենի կեպային զույգերը լիովին կվերաբերեն դրան՝ делать, сделать: Ռուսերենի ինֆինիտիվի անկատար կերպը մյուս լեզուներում, ինչպես օրինակ՝ լատիներենում, ֆրանսերենում, անգլերենում, և գերմաներենում, թարգմանվում է ինֆինիտիվի ներկա ժամանակով, իսկ կատարյալը՝ անցյալ ժամանակով[20]:

Հայերենի անորոշը ունի միայն անկատարության կերպը, քանի որ, եթե անգամ բայարմատը ինքնին կատարյալ է, համապատասխան վերջամասնիկները նրան անկատար են դարձնում՝ տես+ն+ել, փախ+չ+ել: Սակայն կան նաև միակատարության և բազմակատարության կերպերը, որոնք Գ. Ջահուկյանը միավորում է տևականի և ոչ տևականի մեջ՝ լողալ, լողանալ: Մյուս կողմից, նա առանձնացնում է նաև չեզոք արմատներ, որոնք այս կամ այն վերջամասնիկներով ստանում են կամ անկատարի՝ ան, են, ն, մոտենալ, իմանալ կամ կատարյալի արժեք (պատճառական)՝ ացց, եց, ց, ձ, ր՝ մոտեցնել, իմացնել[21]:

Անգլերենում առկա է ինֆինիտիվի ընդհանուր՝ to go և շարունակական կերպը՝ to be going: Ընդ որում՝ այս դեպքում կերպը սերտորեն կապված է ժամանակայնության և ժամանակային հաջորդականության (տաքսիսի) կարգերի հետ: Շարունակական ինֆինիտիվը ցույց է տալիս դիմավոր բայի գործողությանը համընթաց գործողություն՝

*I'm happy to be listening to your singing.*

*I was happy to be listening to your singing.*

Ինչ վերաբերում է անցյալի շարունակական ինֆինիտիվին, ապա այն ցույց է տալիս դիմավոր բայի գործողությանը նախորդող շարունակվող գործողություն՝

*I am pleased to have been doing this work all the time.*

*«Ինձ դուր է գալիս , որ ես մշտապես զբաղվում եմ այս գործով»*[22]:

**Տիպարայնությունը** բնորոշվում է երեք տիպարային իմաստներով՝ գործողային (անցողական, արտակայական), վիճակային (անանցողական, ներակայական) և փոխարկային: Այդ իմաստները սերտորեն կապված են կերպային իմաստների հետ, և պատահական չէ, որ արտահայտվում են կերպային տարբերիչների միջոցով՝ -ացց, ան/ացց, չ/-, ն/ր և այլն[23]:

Բոլոր դեպքերում անորոշն արդեն ունի տիպարային այս կամ այն իմաստը՝ գործողայնություն կամ վիճակայնություն[24]: Գործողայնությունը հանգում է անկատարի, իսկ վիճակայնությունը՝ կա-

[20] **Покровская З. А., Кацман Н. Л.,** նշվ. աշխ., էջ 177:

[21] **Ջահուկյան Գ. Բ.,** նշվ. աշխ., էջ 252-255:

[22] **Gouzeeva K. A., Kostygina S. I.,** նշվ. աշխ., էջ 34-36:

[23] **Ջահուկյան Գ. Բ.,** նշվ. աշխ., էջ 263-264:

[24] Նույն տեղում, էջ 267:

տարյալի: Այս նույն հակադրությունը կարելի է տեսնել նաև մյուս լեզուներում, ինչպես, օրինակ՝ գերմաներենի կայական ու ներգործական ինֆինիտիվներում՝ lesen, gelesen sein:

Ինչպես Մեյեն է նկատում, սլավոնական լեզուների ինֆինիտիվի ցուցիչ –ti-ն երբեք անմիջականորեն չի կցվում ներկայի հիմքին, այլ՝ կա՛մ անմիջապես արմատին, կա՛մ ձևակազմիչ տարրերին՝ կազմելով -ati, -ěti, -iti: -ěti- ի -ě-ն, առրիստի ձև է համարվում, որն արտահայտում է վիճակի իմաստ, քանի որ այն այլևս հանդես չի գալիս ներկայի հիմքում, այլ միայն ինֆինիտիվում և առրիստում ու անցյալ բայածականում[25]:

Ռուսերենում կարելի է տեսնել նաև դրա կապը միջին սեռի հետ այնպիսի կառույցներում, ինչպիսին է, օրինակ՝ Земля есть пахать: Ինֆինիտիվի միջին սեռի նշանակությունը, կարելի է բխեցնել առրիստի հիմքից, թեև ոմանք այդ իմաստը կապում են նաև հանգույցի հետ[26]: Մեր կարծիքով, այն կապված է նաև ինֆինիտիվի հիմքի հետ, որն ունի արդեն վիճակի իմաստ, որն էլ հենց միջին սեռի բուն բովանդակությունն է:

Սեռայնությունը նույնպես զարգացել է մեկ քերականույթից՝ ժամանակի ընթացքում ձեռք բերելով նաև մյուս քերականույթները և ստեղծելով հակադրություններ: Հին հունարենում ինֆինիտիվն ունի ներգործական, կրավորական և միջին սեռի ձևերը[27], լատիներենում՝ միայն ներգործական և կրավորական սեռերը՝ lāudare, lāudarī[28]: Ռուսերենում առկա է երեք սեռ՝ ներգործական՝ спросить, միջին՝ заниматься և կրավորական՝ быть спрошенным[29]:

Գերմաներենում ինֆինիտիվն ունի ներգործական և կրավորական սեռ՝ lesen, gelesen werden: Անգլերենում to translate, to be translated[30].

Հայերենում ժամանակի ընթացքում նույնպես զարգացել է անորոշի կրավորական սեռը:

Կառուցվածքային տեսանկյունից ինֆինիտիվի հասկացական կարգերը քննելիս բնականաբար պետք է նախապատվությունը տալ արտահիրադրական և ոչ թե գործաբանական մոտեցմանը, քանի որ նպատակ չունենք քննության առնելու առանձին տեքստեր:

Շարակարգում ի հայտ են գալիս, մի կողմից՝ դիմայնությունը և եղանակայնությունը, որը սերտորեն կապված է իրադրական ժամանակայնության հետ՝ որպես թաքնված կարգ, մյուս կողմից՝ որոշյալությունը և

---

[25] **Мейе А.** *Общеславянский язык, М., 1951, с. 194-198.*

[26] **Gippert J.** *Das Nominativ-Objekt des Infinitivs (Die Slawischen Sprachen, 1983, N 4, S. 19).*

[27] **Löwe G.,** *նշվ. աշխ., էջ 180-181:*

[28] **Покровская З. А., Кацман Н. Л.,** *նշվ. աշխ., էջ 194-195:*

[29] **Smirnitsky A. I.** *Essentials of Russian Grammar, M., 1975, p. 90-91.* **Покровская З. А., Кацман Н. Л.,** *նշվ. աշխ., էջ 177:*

[30] **Gouzeeva K. A. Kostygina S. I.,** *նշվ. աշխ, էջ 25:*

սեռայնությունը: Սա պայմանավորված է ինֆինիտիվի երկակի բնույթով՝ բայական և գոյականական:

Ժառանգելով գոյականի հնարավորությունները՝ ինֆինիտիվը նաև ցուցաբերում է ստորոգական անկախության միտումներ «ստորոգական անլիարժեքության» հետզհետե հաղթահարման գործընթացում[31]:

Ինֆինիտիվի ինքնուրույն ստորոգական արտահայտության հնարավորությունը սերտորեն առնչվում է անդեմ դարձվածների զարգացման գործընթացի հետ: Այսպես՝ հանգույցով և առանց հանգույցի ինֆինիտիվ կառույցները հանգում են մեկ ընդհանուր նախաձևի, քանի որ երբեմն, հանգույցով կազմված բայական ձևերի կորստի հետ կապված, եղանակային իմաստը ստանձնում է ինֆինիտիվը, ինչպես ռուսերենում: Ֆր. Միկլոշիչն անգամ սլավոնական տարբեր լեզուներում հանգույցով ինֆինիտիվ կառույցը ոչ թե պարտադիր, այլ հնարավոր երևույթ է համարում[32]:

Ըստ Յու. Պուպինինի՝ չնայած դեմքի քերականույթի բացակայությանը՝ ինֆինիտիվը շարակարգում ի վիճակի է ներառել դիմայնությունը[33]: Օրինակ՝ Նա որոշել է լքել երկիրը: Այստեղ, անշուշտ, գործ ունենք քողարկված ենթակայի հետ, որ արտահայտվում է ստորոգական կառույցի ենթակայով կամ խնդրով:

Ա. Բոնդարկոն ինֆինիտիվը ներառում է ավելի լայն՝ գործառա-իմաստաբանական ընդհանուր համակարգում՝ ելնելով գործառույթից և իմաստից ու գնալով դեպի դեմքի քերականական կարգի արտահայտության ձևը: Ըստ նրա՝ այն ներկայացնում է իմաստաբանական ամբողջություն, քանի որ ունի մի քանի գործառույթ՝ հասցեատիրոջ գործառույթ (անուղղակի խնդիր), որին է ուղղված ասույթի եղանակային բովանդակությունը, և այդ գործողության ենթակայի գործառույթը, որը պետք է, ենթադրվում է կատարել: Ընդ որում, տրամաբանական ենթական հանդես է գալիս ոչ թե ենթակայի, այլ լրացման գործառույթում՝ անվան կամ դերանվան տեսքով[34]. Նա օգնում է ինձ ավարտին հասցնել աշխատանքը:

Դիմայնության հետ սերտորեն առնչվում են ժամանակայնությունը, սեռայնությունը և եղանակայնությունը: Եթե համակարգային տեսանկյունից ժամանակայնությունն ու սեռայնությունը՝ որպես անորոշի հասկացական կարգեր, հատուկ են սահմանակափակ թվով լեզուների, ապա շարակարգային տեսանկյունից դրանք հատուկ են բոլոր լեզուներին՝ որպես քողարկված կարգեր: Որպես կանոն՝ ինֆինիտիվի ժամանակը կախված է դիմավոր բայի ժամանակից, թեև երբեմն այն կարող է արտահայտել նաև այլ ժամանակային պլան՝ կախված ստորոգական կառույցի իմաստային դաշտի պատկանելությունից: Այսպես, նպատակի, ցանկության, մտադրության

[31] Հմմտ. **Тупикова Н. А.,** *նշվ. աշխ., էջ 61:*

[32] *Նույն տեղում:*

[33] *Նույն տեղում, էջ 69:*

[34] *Նույն տեղում, էջ 67-68:*

*բայերի դեպքում ինֆինիտիվը արդեն վերաբերում է ապառնիի ժամանակային պլանին՝*

*Նա ցանկանում է շուրջերկրյա ճանապարհորդություն կատարել:*

*I'm going to study English. «Ես պատրաստվում եմ ուսումնասիրել անգլերեն»[35]:*

*Ինչպես վերը նշվեց, անցյալի ինֆինիտիվը նույնպես կարող է արտահայտել ապառնիի իմաստ: Գերմաներենում ինֆինիտիվ II-ի այդ գործածությունը ավանդված է դեռևս միջին վերին գերմաներենում՝ du moust in schiere vloren hƏn (du wirst ihn bald verlieren). Հատկապես այսպիսի կառույցներ շատ կան* wollen *-ով[36]: Ժամանակակից գերմաներենում նույնպես այն ունի գործողության սպասված ավարտի իմաստ[37]՝ Ich hoffe, diese Sache erledigt zu haben. «Ես հուսով եմ, որ այդ գործը կանեմ»:*

*Ֆրանսերենում ևս անցյալի ինֆինիտիվը ոչ միայն կարող է նախորդել դիմավոր բայի գործողությանը, այլև հաջորդել դրան՝ Il compte Utre revenue le mois prochain[38]. «Նա ծրագրում է վերադառնալ հաջորդ ամիս»: Նույնը վերաբերում է անգլերենին: Անցյալ ժամանակով* (Past Simple) *դրված հետևյալ բայերից հետո՝ to espect, to hope, to intend, to mean, to try դրված անցյալի (perfect) ինֆինիտիվը ցույց է տալիս, որ գործողությունը ոչ թե տեղի է ունեցել, այլ սպասվում, պլանավորվում է՝ I meant to have written a letter to her. (but I didn't) «Ես մտադիր էի նրան նամակ գրել (գրած ունենալ)» (բայց չարեցի)[39]: Ի դեպ, ներկա ինֆինիտիվը որոշ զգացական բայերից հետո, ինչպիսիք են՝ to astonish, to like, to relieve, to shock, to surprise, to wonder, կարող է ցույց տալ նաև դիմավոր բային նախորդած գործողություն՝ I was surprised to find himself alone[40].*

*Ինչ վերաբերում է* ***սեռայնությանը****, ապա այն երբեմն արտացոլվում է միայն համատեքստում: Այսպես՝ հին հայերենի անորոշում ե-ով բայերը կարող են ունենալ և՛ ներգործական, և՛ կրավորական իմաստ՝ շարժել(շարժվել), գտանել(գտնվել), ադալ(ադացվել): Իսկ սեռի տարբերությունը որոշվում է ըստ կիրառության[41]: Անգամ ի խոնարհիչը անորոշում փոխվում է ե-ի, օրինակ՝ նստիմ, նստել, հետդասա-*

*կան շրջանում արդեն՝ նստիլ[42], քանի որ –իլ մասնիկի գործածությունը անորոշ դերբայում ընդհանրանում է համեմատաբար ուշ շրջանում[43]:*

---

[35] *Նույն տեղում:*

[36] **Paul H., Mitzka W.** *Mittelhochdeutsche Grammatik, Tübingen , 1959, S. 234.*

[37] **Schendels E. J.,** *նշվ. աշխ., էջ 100:*

[38] **Костецкая Е. О., Кардашевский В. И.,** *նշվ. աշխ., էջ 163:*

[39] **Gouzeeva K. A. , Kostygina S. I.,** *նշվ. աշխ., էջ 34:*

[40] *Նույն տեղում, էջ 33:*

[41] **Աբրահամյան Ա. Ա.,** *Գրաբարի ձեռնարկ, Ե., 1964, էջ 130-131:*

[42] **Jensen H.** *Altarmenische Grammatik, Heidelberg, 1959, S. 103.*

[43] **Աբրահամյան Ա. Ա.,** *նշվ. աշխ., էջ 130-131:*

**Եղանակայնությունը** *նույնպես կարող է արտահայտվել տարբեր եղանակավորիչ բայերի միջոցով հաղորդակցական պլանում: Այսպես՝ Ն. Տուպիկովան, խոսելով ինֆինիտիվի եղանակաժամանակային իմաստների արտահայտման կարողության մասին, նկատի ունի եղանակայնության կարգի լայն ըմբռնումը, որն օժտված է բառաքերականական բնույթով և ցույց է տալիս հարաբերություն իրականության հանդեպ: Այս դեպքում եղանակայնությունը դիտվում է որպես ստորոգայնության կարգերից մեկը, որը ձևավորում է նախադասության քերականական բովանդակությունը, և որը ներառում է այն իմաստները, որոնք արտահայտվում են խոսողի կողմից կամ էլ կարող են իրացվել մտածող գործող անձի այս կամ այն պատկերացումների հանդեպ ունեցած վերաբերմունքի մեջ: Ինֆինիտիվի կառույցներում ամենակարևոր դերը խաղում են այն իմաստները, որոնց համար ենթակայությունն ընդհանուր է*[44]*: Նա ցանկանում է մեկնել արտերկիր:*

*Հրամայական, հարցական և պատմական (պատմվածքին ավելի շատ կենդանություն հաղորդելու համար) ինֆինիտիվները նույպես վերաբերում են հասկացական կարգերի կառուցվածքային դասակարգմանը: Ի տարբերություն պատմական ինֆինիտիվի, հարցական և հրամայական ինֆինիտիվներն ավելի գործածական են ժամանակակից լեզուներում, ինչպես գերմաներենում, ֆրանսերենում, ռուսերենում և այլն: Օրինակ՝ Que dire? «Ի՞նչ ասել»: Op aller? «Ո՞ւր գնալ»: S'adresser au bureau*[45] *«Դիմե՛լ գրասենյակ»: Schweigen! «Լռե՛լ»:*

*Անորոշը հայերենում կարող է հանդես գալ ինչպես հրամայական՝ «Գլխատել ստահակին….» (Ն. Զարյան), այնպես էլ ըղձական եղանակի իմաստով՝ «Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ, Ամենին մոռանալ..» (Տերյան): Կարող է արտահայտել նաև եղանակային այլ երանգներ՝ «Լինե՞լ, թե՞ չլինել՝ այս է խնդիրը» (Շեքսպիր)*[46]*:*

*Պատմական ինֆինիտիվը հատուկ է մի շարք լեզուների, ինչպիսիք են լատիներենը, ֆրանսերենը, սլավոնական լեզուները և այլն: Օրինակ՝ Ainsi, dit le renard, et flatteurs d'applaudir.* (La Fontaine)[47] *«Այսպես,- ասաց աղվեսը և հաճոյանալով ծափահարեց»: И царица хохотать, и плечами пожимать*[48]*. «Կայսրուհին ծիծաղեց և ուսերը թոթվեց»:*

*Որոշ լեզուներում եղանակային իմաստ կարող են արտահայտել նաև այլ կառույցներ, ինչպես, օրինակ՝ անգլերենում* to be-*ով և կրավորական ինֆինիտիվով հետևյալ կառույցները՝ You are to be congratulated. «Ձեզ պետք է*

---

[44] **Тупикова Н. А.,** *նշվ. աշխ, էջ 66:*

[45] **Костецкая Е. О., Кардашевский В. И.,** *նշվ. աշխ., էջ 168:*

[46] **Աստրյան Մ. Ե.,** *Ժամանակակից հայոց լեզու, Ե., 2002, էջ 232:*

[47] **Костецкая Е. О., Кардашевский В. И.,** *նույն տեղում:*

[48] **Голуб И. Б.** *Русский язык, М., 2002, с. 172.*

*չնորհավորել»: He was nowhere to be found. «Նրան ոչ մի տեղ չէին կարողանում գտնել»[49]:*

*Ժամանակակից հայերենում հնաբանություն են համարվում անորոշի՝ օժանդակ բայերի ժխտական ձևերի հետ կազմված ենթադրական եղանակի ժխտական ձևերը՝ «Երբեք իր բնի մոտերքում որս չի անիլ ու վնաս չի տալ» (Թումանյան)[50]:*

*Այսպիսով՝ դեմքի, եղանակի, երբեմն նաև ժամանակի ու սեռի քերականական կարգերը կարող են առկայացվել հենց համատեքստում, որով էլ պայմանավորված է ինֆինիտիվի կարևորագույն հատկանիշը՝ բազմագործառութայնությունը:*

*Ինչ վերաբերում է քերականական սեռին և որոշյալությանը, ապա այս դեպքում ինֆինիտիվը գոյականաբար գործածվելիս է ձեռք բերում այդ քերականական կարգերը: Որոշ լեզուներում, ինչպես, օրինակ՝ ժամանակակից ռուսերենում, ինֆինիտիվը չի գոյականացվում, հետևաբար, նաև չի կարող ունենալ վերոհիշյալ հասկացական և քերականական կարգերը: Չնայած ռուսերենի ինֆինիտիվը ցուցաբերում է գոյականացման որոշակի միտումներ: Այսպես՝ որպես ենթակա հանդես եկող ինֆինիտիվը երբեմն համաձայնեցվում է չեզոք սեռով դրված գոյականների, դերանունների և բայածականների հետ՝ "...которому в бою не уступить великой честью озарило б мои младые годи", Жук. VI, 105[51]: Բացի այդ՝ հնագույն հեղինակները ինֆինիտիվն ու գոյականը հաճախ միացրել են միմյանց "и" «և» շաղկապով՝ որպես նախադասության նույն անդամներ՝ Любят все (домашние слуги) властвовать и корысть[52]:*

*Որոշ լեզուներում ինֆինիտիվը լիովին մուտք է գործում անվանական համակարգ և կորցնում նաև խնդրառությունը, ինչպես, օրինակ՝ գերմաներենում և դակոռումիներենում[53]:*

*Հայտնի է, որ ժամանակակից գերմաներենում որոշ գոյականացված ինֆինիտիվներ ամրացել են այդ գործառույթում և դարձել իսկական գոյականներ՝ դադարելով նշել որևէ գործողություն das Leben, das Essen[54]:*

*Անշուշտ, այն դեպքում, երբ ինֆինիտիվը լիովին գոյականացվում է, այն հարկ է դիտարկել համակարգային տեսանկյունից, սակայն այս դեպքում ինֆինիտիվն իր հասկացական և քերականական կարգերով չի տարբերվի գոյականից:*

*Գերմաներենում գոյականացված ինֆինիտիվը ի հայտ է գալիս դեռևս իր զարգացման ամենահին շրջանում: Օտֆրիդի երկերում այն դրվում է չնչին*

---

[49] **Gouzeeva K. A. Kostygina S. I.,** *նշվ. աշխ., էջ 28:*

[50] **Աստղյան Մ. Ե.,** *նշվ. աշխ., էջ 232:*

[51] **Буслаев Ф. И.** *Историческая грамматика русского языка, М., 1959, с. 373 .*

[52] *Նույն տեղում:*

[53] **Габинский М. А.,** *Появление и утрата первичного албанского инфинитива, Л., 1970, с. 242.*

[54] **Dal Ing.** *Kurze deutsche Syntax, Tübingen, 1966, S. 107.*

*քանակությամբ բայերի հետ կա՛մ ուղղականով, կա՛մ հայցականով և միշտ հանդես է գալիս հոդով[55]: Միջին վերին գերմաներենում գոյականացված ինֆինիտիվը կարող է գործածվել դերանվան կամ ածականի հետ՝ ein widerkUren: Ընդ որում՝ այն դեռ պահպանում է իր խնդրառությունը՝ einander kƂssen dƵ geschah[56]:*

*Ինֆինիտիվը գոյականացվելիս սովորաբար ստանում է չեզոք սեռի հոդ, ինչպես գերմաներենում, իսկ եթե տվյալ լեզվում չկա չեզոք սեռ, ապա՝ արական սեռի հոդ, ինչպես, օրինակ՝ ֆրանսերենում՝ le dnjeuner. Արդեն XIII դարում գոյականացված ինֆինիտիվը ֆրանսերենում կորցնում է իր խնդրառությունը, և դրա փոխարեն աստիճանաբար գործածական է դառնում de +infinitiv կառույցը[57]:*

*Այսպիսով՝ ինֆինիտիվի հասկացական և քերականական կարգերի համակարգային և կառուցվածքային վերլուծությունը ցույց է տալիս, որ ինֆինիտիվի հասկացական և քերականական կարգերը այս երկու տեսանկյունից տարբեր ընդգրկում ունեն: Եթե համակարգային տեսանկյունից դրանք սահմանափակվում են ժամանակայնությամբ, սեռայնությամբ, կերպայնությամբ, ապա կառուցվածքային տեսանկյունից ավելանում են դիմայնությունը և եղանակայնությունը, որոնք սերտորեն կապված են իրադրական ժամանակայնության հետ՝ որպես թաքնված կարգեր, մյուս կողմից, որպես առարկայնության հասկացական կարգեր՝ ավելանում են որոշյալությունը և սեռայնությունը:*

## СТРУКТУРНЫЙ И СИСТЕМНЫЙ АНАЛИЗ ПОНЯТИЙНЫХ И ГРАММАТИЧЕСКИХ КАТЕГОРИЙ ИНФИНИТИВА

ГАГИНЯН А. Р.

Резюме

Большинство понятийных категорий характеризуется определенным функционально-семантическим полем ядра и периферий. В роли грамматикализированного ядра этого поля выступает соответствующая грамматическая категория. Так, темпоральности соответствует время, модальности – наклонение и т. п.

Структурный и системный анализ понятийных и грамматических категорий инфинитива выявляет с обеих точек зрения разный объем понятийных и грамматических категорий инфинитива. Если с системной точки зрения они ограничиваются темпоральностью, залоговостью,

[55] **Erdmann O.** *Untersuchungen über die Syntax der Sprache Otfrids, Erster Teil, Die Formation des Verbums in einfachen und in zusammengesetzten Sätzen, Halle, 1874, S. 210.*

[56] **Paul H., Mitzka W.,** *նշվ. աշխ., էջ 234:*

[57] **Габинский М. А.,** *նշվ. աշխ., էջ 208:*

аспектуальностью, то с точки зрения структуры к ним прибавляются финитность и модальность, тесно связанные с ситуативной темпоральностью. С другой стороны, к ним относятся также понятийные категории определенности/неопределенности и пола.

**THE SYSTEMIC AND STRUCTURAL ANALYSIS OF CONCEPTUAL AND GRAMMATICAL CATEGORIES OF THE INFINITIVE**

**A. GAGINYAN**

Abstract

The present paper performs a systemic and structural analysis of conceptual and grammatical categories of the infinitive. The majority of conceptual categories are characterized by the centre and periphery of functional-semantic fields, whose grammaticalized centre is the appropriate grammatical category, for example, temporality corresponds to tense, modality to mood. The systemic and structural analysis of conceptual and grammatical categories of the infinitive demonstrates that from both standpoints, the conceptual and grammatical categories of the infinitive have a different scope. If from the systematic standpoint, they are confined to the temporality, genera verbi, aspectual correlation, then from the structural standpoint they are related to finiteness and modality. At the same time, they also comprise the categories of gender and definiteness/indefiniteness.